Ա - 14668

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«03» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0196-23

Ձեռնարկողը՝ ***«Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ»***
ք. Երևան, Մյասնիկյանպ. 5/1

Գործունեությունը՝ ***Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում ջրագծերի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0196-23

«03» Նոյեմբերի 2023թ.

Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքով ջրագծերի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ»
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ Հաշվետվություն/ համաձայն՝ Դիլիջանի համայնքապետարանը նախատեսում է իրականացնել Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում և «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ «Դիլիջան» ԱՊ/ տարածքում ջրագծի կառուցման աշխատանքներ: Նախատեսվող գործունեությունը ներկայացված է ՀՀ կառավարության կողմից՝ սուբվենցիոն ծրագրով: Ծրագրի իրականացումը կապահովի ջրային ռեսուրսների կայուն և արդյունավետ օգտագործումը: Քանի դեռ բնակավայրում չկա առանձին ոռոգման համակարգ, նախատեսվում է ջուրն օգտագործել ցանքատարածությունների և այգիների ոռոգման համար, ինչը կխթանի համայնքի կենսամակարդակի բարելավմանը և ագրոտնտեսական աճի զարգացմանը:

Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի նոյեմբերի 30-ին տրված N ԱՀ-12 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ և տեխնիկական առաջադրանքը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում՝ մարզկենտրոն Իջևանից 28կմ հարավ-արևմուտք, Աղստև գետի ձախափնյակում, Դիլիջան-Իջևան ճանապարհի վրա: Նախատեսվող ուղեգիծն անցնում է ծովի մակարդակից 1550մ բարձրություն ունեցող ռելիեֆով: Գործունեության իրականացման համար օգտագործվելու են Դիլիջանի համայնքային հողերը, գոյություն ունեցող ասֆալտապատ և գրունտային

ճանապարհները: Ուղեգծի արտաքին ցանցը մասամբ անցնում է «Դիլիջան» ԱՊ-ի տարածքով:

Գործունեության ենթակա տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է գրունտների 4 շերտով՝

շերտ 1- ասֆալտային,

շերտ 2- բեկորախճային գրունտներ 20-25% ավազա-կավավազային լցանյութով,

շերտ3-խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆ-ավազաքարեր,

շերտ 4 - ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆ-ավազաքարեր:

Համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի՝ գրունտի սառեցման առավելագույն խորությունը կազմում է 47 սմ և բարենպաստ է շինարարություն կատարելու համար:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5մ-ից ավելի խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն տարածքում բացակայում են:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ. «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ գործունեության տարածքը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ Amax= 0.4g արագացմամբ, միչև 9 բալ սեյսմիկությամբ:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Շինարարության տևողությունը կկազմի 12 ամիս:

Տավուշի մարզի կլիման բարեխառն է՝ չափավոր տաք ամառներով և մեղմ ձմեռներով, օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8,3 ^{0}C, բացարձակ նվազագույնը՝ - 23.0^{0}C, բացարձակ առավելագույնը՝ +38.0^{0}C: Օդի հարաբերական խոնավությունը՝ 74%: Տեղումների միջին քանակը կազմում է 639մմ, ձյան ծածկույթի առավելագույն հաստությունը՝ 53սմ: Քամու միջին տարեկան արագությունը հավասար է 1.8 մ/վրկ:

Տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունը հարուստ գետային ցանցն է: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից:

Ծառաթփային բուսականությունը նախատեսվող գործունեության հատվածում բացակայում է: Խողովակաշարերն անցկացվելու են գոյություն ունեցող ճանապարհի հարևանությամբ՝ նախկին խողովակաշարերի սպասարկման գոտիներով: Նախատեսվող գործունեության տարածքի հարևանությամբ գտնվող հողերը համայնքային, պետական և մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր են: Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքները ներառում են.

- արտաքին ցանցի կառուցում /6 կմ երկարությամբ/,
- ներքին ցանցի կառուցում /2 կմ երկարությամբ/,
- գլխամասային ջրընդունիչի կառուցում,
- կապտաժի կառուցում՝ մեկ հատ,
- ջրամբարի ցանկապատում,
- ջրաչափական դիտահորի կառուցում:

Կառուցվող խողովակաշարերը լինելու են պողպատե և էթիլեն: տեղադրման խորությունը պայմանավորված է գրունտի սառեցման խորությունով և կազմում է 105 սմ: Բնակավայրի գլխամասում նախատեսվում է նոր ջրամատակարարման կարգավորիչ հոր,

որտեղ ջրատարը բաժանվում է երեք ճյուղի՝ OD160, DN150, OD110: Ջրատարը բնակավայրի տարածքում միանալու է առկա ջրամատակարարման հորին:

«Դիլիջան» ԱՊ-ի տարածքում շինարարական աշխատանքներն իրականացվելու են հատուկ սկզբունքներով՝ բացառելով ծանր տեխնիկայի շարժը հողային և բուսական ծածկույթի վրա, հատկապես որտեղ կիրճ կա աշխատանքներն իրականացվելու են ձեռքով:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքում բուսահողը բացակայում է: Ջրագծերի անցկացումը և դրա հետ կապված շինարարական աշխատանքներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված և ասֆալտապատ տարածքներում, նոր տարածքների օտարում չի նախատեսվում: Խողովակաշարերն անցկացվելու են գոյություն ունեցող ջրանցքի ուղեգծով, ուստի հողային ռեսուրսներին հասցվող վնասի փոխհատուցման միջոցառումների անհրաժեշտություն չկա:

Ըստ բուսաբանական հետազոտությունների՝ նախատեսված գործունեության տարածքներում հանդիպող բուսատեսակներն ընդգրկված չեն ՀՀ Կարմիր գրքում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործվելու են՝ ավտոինքնաթափ, ավտոամբարձիչ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր, ավտոբետոնախառնիչ և այլն:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր՝ բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, բիտումա-պոլիմերային մաստիկ, եռակցման էլեկտրոդներ և այլն, որոնք նախընտրելի է ձեռք բերել արտոնագրված մատակարարներից: Բնական ռեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման, շինանձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու համար ջուրը բերվելու է այդ նպատակի համար նախատեսված տարրաներով:

Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (25մարդ), ինչը կազմում է 215.8 մ^3: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովվելու են՝ տեղադրելով շարժական բիոզուգարան, որը տեղադրվելու է վարձակալության հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու է: Կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են անջրանցիկ նյութերից կառուցված կեղտաջրերի հավաքման հորում /ԿՀՀ/: Նախատեսվում է շաբաթական մեկ անգամ հատուկ մեքենաներով արտահանել հորի պարունակությունը տեղական մարմինների հետ համաձայնեցված կոյուղու կոլեկտոր:

Շինարարական աշխատանքների ժամանակ բոլոր ապամոնտաժված խողովակագծերը վերադարձվելու են կոմունիկացիաների սեփականատերերին:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, հողային աշխատանքների, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումների հետ (վառելիքի այրման արդյունքում): Շինարարական հրապարակների նախապատրաստման ընթացքում փորվելու և հանվելու է 4700մ^3 գրունտ, որից 3800 մ^3 օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ 900 մ^3 մնացորդային գրունտը կտեղափոխվի Դիլիջան համանքի կողմից հատկացված Թեղուտ բնակավայրից 7 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով:

Համաձայն Հաշվետվության՝ շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մերժելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք ներառված են Հաշվետվության միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Մասնավորապես.

- մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ,
- շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
- կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շինժամանակահատվածում մեկ անգամ,
- տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն Կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում կապալառուն տեղեկացնելու է «Դիլիջան» ԱՊ-ին՝ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է ներդնել 250000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում:

Ջրագծի անցկացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են նվազագույն և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Տավուշի մարզպետարանը, Դիլիջանի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:
- Շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլացիաների հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին:
- Պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:
- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել

- տարածքում թափոնների բաց այրումը՝ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ պահվելով թափոնների կուտակումներից,
- ծառահատումները, հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը,
- «Դիլիջան» ԱՊ-ի տարածքում մեքենաների կայանումը: Մեքենաները կայանել միայն ճանապարհի երկայնքով՝ չվնասելով հողային ծածկույթը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում ջրագծերի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան